Արմինե Մուրադյան

Մոսկվա (Մոսքոու)

Քաղա՛ք,

ես ատում եմ քեզ.

այստեղ էր, որ մայրս լացում էր

ու այստեղ էին

խաղերի ու մարդկային կյանքերի

ամենազարհուրելի կարուսելները:

Քո մեջ են էժանագին կանայք

ու լքված շան պես հարբած տղամարդիկ…

Քաղա՛ք,

քեզնից սպիրտի հոտ է փչում,

գողացած մանկությանս բեկորներն են քո մեջ,

ու լիքը-լիքը խավարասերներ են լողում

հիշողությանս սավանի վրա…

Մոսքոու,

դու ցուրտ ես,

ու սիրտ խառնելու չափ անտանելի,

ես հազար ու մի կես եմ արել նկարներս քեզ հետ՝

ուղարկելով քեզ գրողի ծոցը…